Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն



Արդյո՞ք մենք պատրաստ ենք:

Ամ հարևանությամբ, որտեղ ես մի ժամանակ ապրում և ծառայում էի, Եկեղեցին գործի մեջ էր դրել մի թռչնաբուծական ծրագիր, որը հիմնականում համալրված էր տեղի ծխերի կամավորներով: Ընդհանուր առմամբ դա խելամիտ ծրագիր էր, որը եպիսկոպոսի շտեմարանին տրամադրում էր տասնյակ հազարավոր ձվեր և հարյուրավոր կիլոգրամ թռչնի միս: Որոշ դեպքերում, սակայն, ագարակի գործը քաղաքի կամավորների մոտ առաջացնում էր ոչ միայն ձեռքերի կոշտուկներ, այլ նաև սրտի և մտքի հիասթափություն:

Օրինակ՝ ես միշտ հիշում եմ այն օրը, երբ մենք հրավիրել էինք Ահարոնյան Քահանայություն կրող երիտասարդ տղամարդկանց արագ մաքրություն անելու համար: Մեր խանդավառ ու եռանդուն խումբը հավաքվեց ծառայության վայրում և արագ ձևով արմատախիլ արեց, հավաքեց ու այրեց մեծ քանակությամբ մոլախոտ ու աղբ: Բոցավառ խարույկի լույսի տակ մենք հացով նրբերշիկներ կերանք և միմյանց շնորհավորեցինք լավ կատարած աշխատանքի համար:

Սակայն մենք առաջացրել էինք աղետալից մի խնդիր: Աղմուկը և կրակն այնպես էին անհանգստացրել 5000 նուրբ և զգայուն ածան հավերին, որ նրանցից շատերը հանկարծակի փետրաթափ եղան և դադարեցին ձու ածել: Դրանից հետո մենք թույլ էինք տալիս, որ մոլախոտն աճի, որպեսզի ավելի շատ ձու ստանանք:

Եկեղեցու ոչ մի անդամ, ով օգնել է կարիքավորներին, իրականում երբեք չի մոռանում այդ փորձառությունն ու չի փոշմանում դրա համար: Աշխատասիրությունը, խնայողությունը, ինքնապահովումը և ուրիշների հետ կիսվելը նոր բաներ չեն մեզ համար:

Մենք պետք է հիշենք, որ պահեստային համակարգի լավագույն տարբերակն այն է, որ Եկեղեցում յուրաքանչյուր ընտանիք ունենա ուտելիքի, հագուստի, և, հնարավորության դեպքում, կյանքի համար այլ անհրաժեշտ բաների պաշար: Տիրոջ շտեմարանը ներառում է Եկեղեցու հավատարիմ անդամների ժամանակը, տաղանդները, հմտությունները, կարեկցանքը, նվիրաբերած նյութերն ու ֆինանսական միջոցները: Այս ռեսուրսները մատչելի են եպիսկոպոսին կարիքավորներին աջակցելիս:

Մենք կոչ ենք անում բոլոր վերջին օրերի սրբերին լինել խոհեմ իրենց պլանավորումները կատարելիս, ապրել չափավոր ձևով և խուսափել մեծ ու ավելորդ պարտքից: Շատ ավելի մարդիկ կկարողանային հաղթահարել տնտեսական խնդիրները, եթե ունենային սննդի ու հագուստի պաշար և չունենային պարտքեր: Այսօր մենք տեսնում ենք, որ շատերը հետևել են այս խորհրդին հակառակ ձևով. նրանք ունեն պարտքի պաշար և չունեն սնունդ:

Ես կրկնում եմ այն, ինչ հայտարարել է Առաջին Նախագահությունը մի քանի տարի առաջ.

«Շատ տարիներ առաջ վերջին օրերի սրբերին խորհուրդ է տրվել պատրաստ լինել անբարենպաստ պայմաններին՝ մի կողմ դնելով որոշակի գումար: Այսպես վարվելն անչափ նպաստում է անվտանգությանն

ու բարեկեցությանը: Յուրաքանչյուր ընտանիք պատասխանատու է հնարավորինս չափ ապահովելու իր սեփական կարիքները:

Մենք հորդորում ենք ձեզ, որտեղ էլ որ դուք ապրեք, որ պատրաստվեք անբարենպաստ պայմաններին՝ ուշադրություն դարձնելով ձեր ֆինանսական վիճակին: Մենք կոչ ենք անում ձեզ լինել համեստ ձեր ծախսերում, կառավարել ինքներդ ձեզ ձեր գնումների հարցում, որպեսզի խուսափեք պարտքից: Ետ վերադարձրեք պարտքը որքան հնարավոր է շուտ և ազատվեք այդ կապանքից: Պարբերաբար գումար խնայեք, որպեսզի աստիճանաբար ֆինանսական պահուստ կառուցեք»:[1]

Արդյոք մենք պատրա՞ստ ենք մեր կյանքում արտակարգ իրավիճակներին: Արդյոք մեր հմտությունները կատարելագործվա՞ծ են: Մենք ապրո՞ւմ ենք շրջահայացորեն: Մենք ունե՞նք մեր պահուստային միջոցները ձեռքի տակ: Մենք հնազանդվո՞ւմ ենք Աստծո պատվիրաններին: Մենք արձագանքո՞ւմ ենք մարգարեների ուսմունքներին: Մենք պատրա՞ստ ենք մեր ունեցածից բաժին հանել աղքատի ու կարիքավորի համար: Արդյո՞ք մենք անկեղծ ենք Տիրոջ հետ:

Մենք ապրում ենք անհանգիստ ժամանակներում: Ապագան հաճախ անհայտ է. հետևաբար, մեզ անհրաժեշտ է պատրաստվել անորոշություններին: Երբ որոշում ընդունելու ժամանակը գալիս է, պատրաստվելու ժամանակն արդեն անցյալում է լինում:

ՀՂՈՒՄ

1. Առաջին Նախագահություն, *All Is Safely Gathered In: Family Finances* (pamphlet, 2007):

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

Հաշվի առնելով նրանց կարիքները, ում այցելում եք, խորհեք այն եղանակների մասին, թե ինչպես կարող եք օգնել նրանց դառնալ ավելի ինքնապահովված աշխատանքի, ֆինանսների, ուտելիքի պահուստի կամ արտակարգ իրավիճակների հարցում: Խորհեք մի հմտության մասին, որով կարող եք կիսվել նրանց հետ, ինչպես օրինակ՝ այգեգործության կամ գումարի տնտեսման հմտության, որը նրանց հնարավորություն կտա հետևելու Նախագահ Մոնսոնի խորհրդին:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Ես կրկին ծառայեցի

Ջեյնի Արուխո

Մի օր, ծառայության ծրագիրն ավարտելուց հետո, ես քայլելով անցնում էի մեր ժողովատան կողքով և տեսա երկու քույրերի, ովքեր մաքրում էին շենքը: Իմ բառերը պարզապես դուրս թռան բերանիցս. «Քույրե՛ր, օգնության կարիք ունե՞ք»: Նրանցից մեկը ժպտաց ինձ ու ասաց, որ ես ժամանակին եմ եկել, քանի որ նրանք միակն էին, ովքեր մաքրում էին և շատ հոգնած էին: Նա ասաց, որ աղոթել էր, որպեսզի Տերն ուղարկեր որևէ մեկին իրենց օգնելու համար: Ես շատ ուրախ էի նրա աղոթքի պատասխանը լինելու համար: Ես հենց նոր էի ավարտել մեկուրիշի համար ծառայություն կատարելը և նույնպես հոգնած էի, սակայն հետևեցի իմ սրտին և առաջարկեցի շարունակել ծառայել:

Ուրախությամբ ծառայելը պատվիրան է (տես ՎևՈւ 24.7): Երբ մենք միշտ ծառայելու ցանկություն ենք ունենում, մենք կարողանում ենք օգնել, որ հրաշքներ տեղի ունենան ուրիշ մարդկանց կյանքում: Մեր կյանքն ավելի իմաստալից է դառնում, երբ մենք ծառայում ենք: Տերն իսկապես սիրում է մեզ, Նա օգնում է Իր բոլոր զավակներին, և Նա մեզ ուժ կտա ծառայելու համար:

Հեղինակն ապրում է Ռիո Գրանդե դո Նորտեյում, Բրազիլիա

ԵՐԵԽԱՆԵՐ

Արդյո՞ք դուք պատրաստ եք:

Պատասխաններ. ճիշտ, ճիշտ, սխալ, ճիշտ, սխալ

Նախագահ Մոնսոնը մեզանից յուրաքանչյուրին խնդրել է պատրաստ լինել դժվար ժամանակների համար և օգնել ուրիշներին իրենց դժվար ժամանակների ընթացքում: Կատարեք այս ճիշտ կամ սխալ ստուգումը, որպեսզի պարզեք՝ արդյոք պատրաստ եք, թե ոչ:

Ես միշտ կարող եմ գտնել որևէ մեկին, ում կարող եմ օգնել: Ճիշտ ☐ Սխալ ☐

Ես կարող եմ երախտապարտ լինել այն ամենի համար, ինչ արդեն ունեմ: Ճիշտ ☐ Սխալ ☐

Ես չունեմ որևէ տաղանդ որևէ մեկի հետ կիսվելու համար: Ճիշտ ☐ Սխալ ☐

Հետագայի համար գումար խնայելը լավ միտք է: Ճիշտ ☐ Սխալ ☐

Երջանիկ լինելու համար ինձ անհրաժեշտ են նոր խաղալիքներ ու հագուստ: Ճիշտ ☐ Սխալ ☐

© 2014 Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/14: Թարգմանության հաստատումը. 6/14: *First Presidency Message, September 2014.*
Armenian.-ի թարգմանությունը 10869 201

Հիսուս Քրիստոսի աստվածային առաքելությունը. Մխիթարիչ

Աղոթքով ուսումնասիրեք այս նյութը և փորձեք հասկանալ, թե ինչով կիսվել: Ինչպե՞ս կարող է Փրկչի կյանքը և դերը հասկանալը մեծացնել ձեր հավատքը Նրա նկատմամբ ու օրհնել նրանց, ում մասին դուք հոգ եք տանում այցելությամբ ուսուցման միջոցով: Լրացուցիչ տեղեկության համար, այցելեք reliefsociety.lds.org:

Հավատք, Ընտանիք, Սփոփանք

Սա այցելող ուսուցիչների ուղերձների այն շարքից է, որը նվիրված է Փրկչի առաքելության տարբեր ոլորտներին:

Հիսուս Քրիստոսը խոստացավ, «Ձեզ որբ չեմ թողիլ. կգամ ձեզ մոտ» (Հովհաննես ԺԴ.18): Նա մեզ կտա «փառք մոխրի տեղ, ուրախութեան իւղ՝ սուգի տեղ» (Եսայիա 61.3): Քանի որ Քրիստոսը Քավել է մեզ բոլորիս համար, Նա մեզ չի մոռանում: «Մեր Փրկիչը . . . Իր վրա է վերցրել . . . մեր ցավերը և մեր տառապանքները և մեր չարչարանքները, որպեսզի կարողանար իմանալ, թե ինչ ենք մենք զգում, և թե ինչպես մխիթարեր մեզ»,- ասել է Լինդա Շ. Ռիվսը՝ Սփոփող Միության գերագույն նախագահության երկրորդ խորհրդականը:[1]

Այն գիտելիքը, որ Քրիստոսը մեզ մխիթարում է, կարող է մեզ խաղաղություն բերել և ոգեշնչել, որպեսզի ուրիշներին ծառայելու միջոցով հետևենք Նրա օրինակին: Ավետարանի մասին մեր գիտելիքը, Երկնային Հոր և մեր Փրկչի նկատմամբ մեր սերը կմխիթարեն ու կաջակցեն մեզ և ուրախություն կբերեն մեր սրտերին, եթե մենք ուղիղ քայլենք և պահենք պատվիրանները: Ոչինչ այս աշխարհում չի կարողանա մեզ հաղթել»:[2]

Սուրբ գրություններից

Յովհաննու 14.18, 23; Ալմա 7.11–13; Վարդապետություն և Ուխտեր 101.14–16

Մեր պատմությունից

Էլեյն Լ. Ջեքը՝ Սփոփող Միության 12-րդ գերագույն նախագահը, ասել է. «Այցելությամբ ուսուցման ժամանակ մենք աջակցում ենք միմյանց: Հաճախ գործերն ավելի բարձր են հնչում, քան բառերը: Մի ջերմ գրկախառնությունը կարող է շատ բան ասել: Միասին ծիծաղելը միավորում է մեզ: Մի պահ կիսվելը նորացնում է մեր հոգին: Միշտ չէ, որ մենք կարողանում ենք բարձրացնել նրա բեռը, ով տագնապի մեջ է, սակայն մենք կարող ենք բարձարցնել նրան, որպեսզի նա կարողանա ավելի հեշտությամբ տանել այն»:[3]

Սփոփող Միության մեր քույրերը «գտել են հոգևոր ուժ միմյանց սիրո և կարեկցանքի մեջ: . . . Երբ նրանք տառապում էին հիվանդությունների ու մահվան փորձություններում, նրանք հավատքով աղոթում էին միմյանց համար և մխիթարում էին միմյանց: «Աստծո սերը հոսում էր սրտից սիրտ,- գրել է Հելեն Մար Ուիթնին,- մինչև որ չարը, թվում էր, էլ ուժ չուներ մեր և Տիրոջ միջև կանգնելու իր ջանքերում, և նրա չար խայթոցները որոշ դեպքերում զուր էին»:[4]

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Լինդա Շ. Ռիվս, «Տերը մեզ չի մոռացել», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2012, 120:
2. Թոմաս Ս. Մոնսոն, «Քաջացեք», *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2009, 92:
3. Էլեյն Լ. Ջեք, *Իմ պրքայության դասընթացը. Սփոփող Միության պատմությունն ու աշխատանքը* (2011), 119:
4. *Իմ պրքայության դասընթացը,* 34

Խորհեք այս մասին

Ինչպե՞ս է այն ըմբռնումը, որ Տերը ձեզ հիշում է, մխիթարում ձեզ:

© 2014 Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/14: Թարգմանության հաստատումը. 6/14: *Visiting Teaching Message, September 2014.* Armenian.-ի թարգմանությունը 10869 201